ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 25
«10» 03 2015թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասով, Ձեզ ենք ներկայացնում՝ Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 25 փետրվարի 2015թ. կայացած թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր՝ 15 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.71/3009-15
12 03 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015 թվական թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 25-ի, թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Ա. Ասատրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25- Ի, ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի, ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՈՒԹԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ՎԱԳՈՆ ՏՆԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՄՐԳԱՍՏԱՆԻ Գ/Պ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015 թվականի թիվ 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ի երկրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու 2015թ. հերթական նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մ. Հարությունյան | | | |
| Հ. Հովհաննիսյան | | | |
| Հ. Աստրյան | | | |
| Ա. Աստրյան | | | |
| Ա. Հովակիմյան | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվականի փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի, ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | | |
|---|---|---|
| փետրվարի 25 | ժամը 16.00 | թիվ 1 |
| ապրիլի 15 | ժամը 16.00 | թիվ 2 |
| հունիսի 18 | ժամը 16.00 | թիվ 3 |
| օգոստոսի 20 | ժամը 16.00 | թիվ 4 |
| հոկտեմբերի 22 | ժամը 16.00 | թիվ 5 |
| դեկտեմբերի 14 | ժամը 16.00 | թիվ 6 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015 թվական թիվ 3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի, ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 55-Ն» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի, «2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 6 հերթական նիստի, թիվ 55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1)Եկամուտների մասով պետության կողմից ֆինանսական համահարթեցման նպատակով տրված դոտացիան պակասեցնել՝ 1.6 հազար դրամ:

2)Շենք շինությունների գույքահարկը ավելացնել՝ 1.6 հազար դրամ:

3)Հողի օտարումից եկամուտ նախատեսել՝ 63.9 հազար դրամ:

4)Շենք շինությունների օտարումից եկամուտ նախատեսել՝ 335.7 հազար դրամ:

2.Հաստատել՝ տարեսկզբի ազատ մնացորդը 5782.5 հազար դրամ.
որից՝

վարչական բյուջե 2716.7 հազար դրամ

ֆոնդային բյուջե 3065.9 հազար դրամ

1)Վարչական բյուջեի 2716.7 հազար դրամը ուղղել ֆոնդային բյուջե:

3.Ֆոնդային մաս

01բաժին 01 խումբ 01 դաս 5121 հոդվածին ավելացնել 100,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 5122 հոդվածին ավելացնել 700,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 5132 հոդվածին ավելացնել 60,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 5134 հոդվածին ավելացնել 50,0 հազար դրամ:
01բաժին 06 խումբ 01 դաս 5112 հոդվածին ավելացնել 350,0 հազար դրամ:
01բաժին 06 խումբ 01 դաս 5113 հոդվածին ավելացնել 200,0 հազար դրամ:
01բաժին 06 խումբ 01 դաս 5121 հոդվածին ավելացնել 2732,2 հազար դրամ:
04բաժին 02 խումբ 04 դաս 5112 հոդվածին ավելացնել 1000,0 հազար դրամ:
01բաժին 06 խումբ 01 դաս 5129 հոդվածին ավելացնել 990,0 հազար դրամ:

4.Պահուստային ֆոնդից պակասեցնել՝ 770,0 հազար դրամ:

01բաժին 01 խումբ 01 դաս 4212 հոդվածին ավելացնել 100,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 4214 հոդվածին ավելացնել 100,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 4264 հոդվածին ավելացնել 100,0 հազար դրամ:
01բաժին 01 խումբ 01 դաս 4237 հոդվածին ավելացնել 150,0 հազար դրամ:
04 բաժին 05 խումբ 01 դաս 4251 հոդվածին ավելացնել 300,0 հազար դրամ:
08բաժին 03 խումբ 02 դաս 4234 հոդվածին ավելացնել 20,0 հազար դրամ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ 5 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվականի փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի,
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ,
ԹԻՎ 4ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Առդիր՝ թերթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015 թվական թիվ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2014թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 19 կարգադրությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը 2014թվականի համար, համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2014 թվական թիվ 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 32-ի առաջին մասի 17-րդ կետով, հոդված 46-ի 3-րդ պարբերությամբ.

Որոշում եմ

1.Անցկացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի պարտադիր գույքագրում:
ա)Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովի նախագահին՝ 2014թվականի դեկտեմբերի 26-ից, երեք օր անցկացնել գույքագրում և ավարտի մասին զեկուցել՝ համայնքի ղեկավարին:
3.Գույքագրման փաստաթղթերը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թվականի դեկտեմբերի 26-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2014թվական դեկտեմբերի 22
գ. Մրգաստան

Հավելված 1
Հ.Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014թվական դեկտեմբերի 22-ի, թիվ 19
որոշման

ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Սուսաննա Ղարիբյան /գ/պ աշխատակազմի քարտուղար/

Հանձնաժողովի անդամներ՝

Աշոտ Հարությունյան /գ/պ աշխատակազմի առաջատար մասնագետ/

Գայանե Եղիազարյան /գ/պ աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/

Հռիփսիմե Սահակյան /գ/պ աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/

Հրայր Հարությունյան /«Մշակույթի տան» վարիչ/

Աննա Հակոբյան /«Մշակույթի տան» գործավար-օպերատոր/

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ /ԳՈՒՅՔ/

| ապրանքի անվանումը | քանակ | արժեք | դուրս է գրվել | հավելված |
|---|---|---|---|---|
| Տրանսֆորմատորի շենք | 1 հատ | 2 201 925 | | |
| մսուր մանկապարտեզի շենք | 1 հատ | 217 271 | | |
| գրադարանի շենք | | 399 600 | վաճառվել է աճուրդով | հարակից հողատարածքով |
| դպրոցի շենք | 1 հատ | 5 286 030 | | |
| բուժ. կետի շենք | 1 հատ | 1 727 500 | | |
| կուլտուրայի տուն | 1 հատ | 26 513 862 | | |
| գրասեղան | 4 հատ | 135 000 | | |
| գրասեղան | 2 հատ | 0 | 2 հատ | |
| համակարգիչ | 1 հատ /LG/ | 245 000 | | |
| տպիչ | 2 հատ PASHER 3100MFP, SAMSUNG ML-1675 | 34 500 | | |
| երկաթյա պահարան | 4 հատ | 4X15261 | | |
| ավտոմեքենա | 1հատ VAZ 21074 | 1 941 940 | | |
| տրակտոր | 1 հատ ԲԵԼՈՌՈՒՍ ՄՏԶ 82,1 | 7 200 000 | | |
| սառնարան | 1 հատ ԲԼԱՆԿԱ | 67 000 | | |
| հեռուստացույց | 1 հատ PHILIPS 24 | 108 000 | | |
| սիզամարգի հնձիչ | 1 հատ Rotak32 | 90 000 | | |
| ջրի պոմպ | 1 հատ KALDO QB 70 | 25 000 | | |
| գազի վառարան | 1 հատ NICALA | 53 000 | | |
| ավտոմեքենայի գազի բալոն | 1 հատ | 988 000 | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

| ապրանքի անվանումը | քանակ | արժեք | դուրս է գրվել | հավելված |
|---|---|---|---|---|
| Գեղարվեստական գրականություն | 800 | | | |
| մասնագիտական գրականություն | 150 | | | |
| արկածային գրականություն | 300 | | | |
| ռուսական գրականություն | 250 | | | |
| մանկական գրականություն | 100 | | | |
| պատմա-մշակույթային | 100 | | | |
| դասական | 200 | | | |
| Մարքս, Էնգելս, Լենին | 150 | | | |
| արտասահմանյան գրականություն | 250 | | | |
| այլ անուն գրքեր | 200 | | | |
| Գրական Արմավիր | 5 | 30 000 | | |
| պոէզիա | 2 | 5000 | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ԲՈՒԺԿԵՏԻ ԳՈՒՅՔ

| ապրանքի անվանումը | քանակ | արժեք | դուրս է գրվել | հավելված |
|---|---|---|---|---|
| աթոռ | 10 հատ | | | |
| հետազոտման մահճակալ | 1 հատ | | | |
| մանկական հետազոտման սեղան | 1 հատ | | | |
| բազմոց | 1 հատ | | | |
| լրագրասեղան | 1 հատ | | | |
| շերտավարագույր | 4 հատ | | | |
| ցուցատախտակ | 2 հատ | | | |
| հայելի և կախիչ | 1 հատ | | | |
| լվացարան | 2 հատ | | | |
| ծորակ | 2 հատ | | | |
| էլեկտրական տաքացուցիչ | 2 հատ | | 2 հատ | 63A |
| ավտոմատ անջատիչ | 2 հատ | | | |
| ջրի պոմպ-1հատ | 1 հատ | | | |
| նորածնի կշեռք-1հատ | 1 հատ | | | |
| մանկական ստեղոֆոնենդոսկոպ | 1 հատ | | | |
| գլխի շրջագիծը չափելու ժապավեն | 1 հատ | | | |
| ճնշման չափիչ | 1 հատ | | | |
| մեծահասակների հասակաչափ | 1 հատ | | | |
| ջերմաչափ | 6 հատ | | | |
| զուգարանագոք | 1 հատ | | | |
| պահարան | 2 հատ | | | |
| գրասեղան | 2 հատ | | | |

Տրվել է «ՓՐԿԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» Ամերիկյան կազմակերպության կողմից, որպես նվիրատվություն:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ)

| ապրանքի անվանումը | քանակ | արժեք | դուրս է գրվել | հավելված |
|---|---|---|---|---|
| գյուղատնտեսական նշանակության | 142.27 | | | |
| բնակավայրերի | 60.4 | | | |
| այլ հողատեսքեր | 43.45 | | | |
| արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ նշանակության օբյեկտների | 8, 92 | | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| անվանումը | կմ. | արժեք | դուրս է գրվել | հավելված |
|---|---|---|---|---|
| ջրագիծ խմելու | 3,5կմ. | 45 000 | հանձնված է ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ՓԲԸ-ին 2012թ.ավագանու թիվ 7 որոշումով, ժամանակավոր օգտագործման մինչև 2017թ. | |
| կոյուղագիծ | 2կմ. | 65 000 | | |
| գազաֆիկացում | 4կմ. | 80 000 | | |
| հուշարձան կառուցված 1984թ. | 300քառ. մետր | 2 100 000 | | |

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015 թվական թիվ 5-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 69-ի 2-րդ պարբերությամբ, ինչպես նաև Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ավագանու կանոնակարգի վեցերորդ հատվածի, 31 հոդվածի երկրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | 5կողմ | 0դեմ | 0 ձեռնպահ |
|---|---|---|---|

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվական փետրվարի 25
գ.Մրգաստան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ 5-Ն ՈՐՈՇՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թվականի հունվարի 19-ին տեղի ունեցավ Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի ղեկավարի 2014թվականին կատարված տարեկան հաշվետվությունը:
Ներկա էին՝ համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և մարզպետարանի ներկայացուցիչ՝ պարոն Գոռ Հովհաննիսյանը:
Օրակարգում՝
1.Համայնքի ղեկավարի 2014թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Զեկուցող՝ /Ռ. Խաչատրյան/

2.Քննարկումներ
Ժողովը բացեց գ/պ աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյանը, ով ներկաներին ծանոթացրեց օրակարգին և նշեց, որ բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալու բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականներ կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ և խնդրեց ելույթից հետո կարծիքներ արտահայտել, համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքի վերաբերյալ և գնահատել կատարված աշխատանքը:
Այնուհետև ձայնը տրվեց՝ համայնքի ղեկավար, պարոն Ռ. Խաչատրյանին:
Ողջունելով ներկաներին պարոն Ռ. Խաչատրյանը իր ելույթը սկսեց հետևյալ տողերով՝ Հարգելի պարոն՝ Գ. Հովհաննիսյան և ներկաներ.
Իմ ելույթով կփորձեմ ըստ ոլորտների ամբողջական պատկեր ներկայացնել՝ համայնքի աշխատակազմի կատարած աշխատանքների և համայնքի բյուջեի կատարման, եկամուտների և ծախսերի վերաբերյալ:
Իրականացնելով օրենքով սահմանված կարգով, համայնքի ղեկավարի իրավասությունները, ավագանու կանոնակարգով սահմանված կարգով, հաշվետու ժամանակաշրջանում, իմ կողմից հրավիրվել և վարվել է ավագանու 12 նիստ, որից վեց հերթական և վեց արտահերթ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերվող կարևորագույն հարցեր:
Հաստատվել է՝ ավագանու նիստերի ժամանակացույցը, ամենամյա գույքագրման փաստաթղթերը, համայնքում աղբահանության իրականացնելու պայմանագիրը:
Ավագանու որոշմամբ համայնքում ստեղծվել է, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն «Մշակույթի տուն», հաստատվել է նշված կազմակերպության կանոնադրությունը:
Եռամսյակը մեկ անգամ հաղորդում եմ ներկայացրել՝ բյուջեի կատարման մասին, ավագանու անդամներին և համայնքի բնակիչներին:
Այժմ կնշեմ կատարված աշխատանքները՝ ըստ ոլորտների.
Մրգաստան համայնքի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատողներից, որից 6-ը հանրային ծառայողներ են, 2-ը հայեցողական պաշտոն է, 1-ը տեխնիկական սպասարկման անձնակազմից:
«Մշակույթի տան» աշխատակազմը բաղկացած է՝ 5 աշխատողներից:
2015թվականի դոտացիան կազմել է՝ 21 541 700 դրամ:

Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 280հա., որից 138.99հա. վարելահող, այգիները կազմում են 5.4հա.:

Գյուղը ունի մեկ միջնակարգ դպրոց:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը և անասնապահությունն է:

2013թ. դեկտեմբերի 6-ի, թիվ 6 հերթական նիստի, թիվ 45-Ն որոշմամբ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով, և 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների ընդունվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2014թ. բյուջեն:

Բյուջեն կազմված է վարչական և ֆոնդային մասից:

Նախատեսված է՝

եկամուտների գծով՝ 38 405.6 հազար դրամ:

Ծախսերի գծով՝ 32 274.4 հազար դրամ:

Դեֆիցիտը կազմել է՝ 0.0հազար դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և «Իրավական ակտերով», հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից իրականացրել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է բյուջեի 6 փոփոխություն, որոնք օրենքով սահմանված կարգով ուղարկվել է Հ.Հ. Արդարադատության նախարարություն փորձաքննության և առաքվել է մարզպետարան համապատասխան ժամկետներում:

Իմ հանձնարարությամբ աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է գյուղապետարանի աշխատակազմի անխափան աշխատանքը:Մասնավորապես՝ նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը:Նիստում քննարկվող հարցերի նախագծերը, մեկ շաբաթ առաջ իրազեկվել է ավագանուն:

Նշված հարցերի օրակարգը և նրանում քննարկված հարցերը փակցված են եղել հայտարարությունների համար նախատեսված տեղերում, համայնքի բնակիչներին իրազեկելու նպատակով:Քարտուղարի կողմից նախապատրաստվել է և ժամանակին առաքվել է մարզպետարան ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները:

Ժամանակին տրվել է պատասխան մարզպետարանից եկած գրություններին:

Գ/Պ աշխատակազմի քարտուղարը՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող առաջին շաբաթվա ընթացքում, ներկայացրել է իր կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Կազմակերպվել է ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի, համայնքի ավագանու, ինչպես նաև համայնքին կցված համայնքային ոստիկանի մոտ:

Ընդունելության դիմած՝ 58 քաղաքացիներից 50-ի դիմումներին տրվել է սպառիչ պատասխան:Հիմնականում բնակչության դիմումները սոցիալական բնույթի են:

Համայնքի բնակչությանը տարվա ընթացքում տրվել է՝ 2 300 000 /երկու միլիոն երեք հարյուր հազար/ դրամի դրամական օգնություն:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը տարվա կտրվածքով կազմում է՝ 4 100 000 /չորս միլիոն հարյուր հազար/ դրամ, հավաքագրվել է՝ 4 120 940 /չորս միլիոն հարյուր քսանհազար ինը հարյուր քառասուն/ դրամ, կատարվել է 100,5 տոկոսով:

Գույքահարկ շենք շինությունների համար՝ 150 200 /մեկ հարյուր հիսուն հազար երկու հարյուրի/ դիմաց հավաքագրվել է՝ 101 090 /հարյուրմեկ հազար իննսուն/ դրամ, 67.3 տոկոս:

Փոխադրամիջոցների համար՝ 1 000 000 /մեկ միլիոն/ դիմաց հավաքագրվել է՝ 1 219 910 /մեկ միլիոն երկու հարյուր տասնինը հազար ինը հարյուր տաս/ դրամ, 122 տոկոս:

Տեղական տուրքերի գծով՝ համայնքի տարածքում առևտրի կետերի, ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, սահմանված 42 000 /քառասուներկու հազարի/ դիմաց հավաքագրվել է՝ 22 500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ, 53.6 տոկոս:
Ոչ հարկային եկամուտների մասով ՝ 300 000 /երեք հարյուր հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 53 500 /հիսուներեք հազար հինգ հարյուր/ դրամ, 17.8 տոկոս:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները:
1.1Համայնքի արխիվից, համայնքի բնակիչներին տրամադրվել է փաստաթղթեր և պատճեններ:Վավերացվել է 2 կտակ:
2.Ֆինանսների բնագավառում իրականացրել եմ հետևյալ պարտադիր լիազորությունները.
2.1Համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները:
2.2Սահմանվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել 2014թվականի ընթացքում համայնքի վարչական տարածքում գործող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:
2.3Իմ կողմից ստորագրվել է ֆինանսական փաստաթղթերը:
2.4Հարկերը և օրենքով սահմանված վճարումները չկատարած անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ ծանուցման եղանակով:
3.Հասարակական կարգի պահպանության բնագավառում, իմ կողմից իրականացվել է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները:
3.1Համայնքին կցված ոստիկանի կողմից, շաբաթը մեկ անգամ ստացվել է տեղեկատվություն՝ համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ:Եթե եղել են այդպիսիք, ապա նախազգուշացվել են:
4.Պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ կամավոր լիազորությունները:
4.1Աջակցել եմ զորակոչին, զորահավաքներին:Միջոցներ եմ ձեռնարկել՝ զին. ծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ:Մասնավորապես՝ համայնքում ունենք զոհված ազատամարտիկի մայր, որի նկատմամբ մեր կողմից ցուցաբերվում է ամենօրյա ուշադրություն:
4.2Աշխատանքներ են տարվում նաև երիտասարդության շրջանում, ռազմահայրենասիրական դաստիարակության վերաբերյալ:
5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները:
5.1Սահմանված դեպքերում համայնքի բնակչությունը իրազեկվել է քաղաքաշինական նորմերի փոփոխությունների մասին:
5.2Իրականացվել է հսկողություն համայնքի սեփականություն համարվող շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ:
5.3Կազմվել է համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը և ներկայացվել է ավագանու հաստատմանը:
5.4Կազմակերպվել է համայնքի որոշակի տարածքների բարեկարգում և կանաչապատում:
5.5Բնականոն ձևով կազմակերպվում է նաև աղբահանությունը:
5.6Ավագանու որոշմամբ կանոնակարգվել է գերեզմանատների գործունեությունը:
5.7Իմ կողմից մեծ ուշադրություն է դարձվում համայնքի հուշարձանի և հարակից տարածքի պահպանման աշխատանքներին:
6.Հողօգտագործման բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները:
6.1Սահմանված կարգով իրականացվել է հողամասերի ընթացիկ հաշվառումը, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը և ներկայացվել է հաստատման ավագանու կողմից:
7.Առևտրի և ծառայությունների բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները:
7.1Իմ կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը տարվա ընթացքում կիսամյակը մեկ անգամ հսկողություն է իրականացնում առևտրի ոլորտում:

7.2Իմ կողմից տրվում է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն՝ Հ. Հ. կառավարության սահմանած կարգով:
8.Մշակույթի, կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները:
8.1Իմ հանձնարարությամբ՝ «Մշակույթի տուն» ՊՈԱԿ-ն իրականացրել է, Հ. Հ. տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ, մասնավորապես՝ «Տյառնընդառաջի», «Մարտի 8-ի», «Խաղաղության օրվա»-ն, նվիրված:
«Մարտի 8-ի» կապակցությամբ համայնքի տարեց կանանց, նվիրվել է արժեքավոր նվերներ:
8.2Աջակցել եմ՝ միջնակարգ դպրոցի գործունեությանը:Մեր մասնակցությունն ենք բերել «Վերջին զանգի», «Գիտելիքի օրվա», ինչպես նաև ամանորյա տոների միջոցառումներին: «Գիտելիքի օրվա»-ն նվիրված առաջին դասարան հաճախող երեխաները, ստացել են պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածու:
8.3Համայնքի՝ 0-10 տարեկան երեխաներին, ամանորի տոների կապակցությամբ նվիրվել է ամանորյա նվերներ:
8.4Համայնքում 4 երեխա ունեցող երիտասարդ ընտանիքներին, 4-րդ երեխայի ծնվելու կապակցությամբ նվիրվել է հեռուստացույց, այդպիսիք 2 ընտանիք են:
9.Իմ կողմից գյուղատնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները:
9.1Կազմակերպել եմ համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության միջոցառումներ, ագրարային կանոնների պահպանման աշխատանքներ:
9.2Աջակցել եմ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
9.3Գյուղացիներին տրամադրվել է ազոտական պարարտանյութ և սերմնացու:
9.4Կառավարության որոշման հիման վրա, տրված սուբսիդյայի միջոցով մարվել է ցրտահարված այգիների հողի հարկը:
9.5Կառավարության կողմից նվիրատվության պայմանագրով մեզ հատկացված՝ 3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ դրամին, համայնքի բյուջեից ավելացվել է ևս 4 000 000 /չորս միլիոն/ դրամ, և այդ գումարով գնվել է ԲԵԼՈՌՈՒՍ 80 մակնիշի տրակտոր, գյուղի կարիքների համար:
Եզրափակելով ելույթս նշեմ, որ համայնքում առկա խնդիրներ շատ կան և իմ նպատակն է անել կատարվածից ավելին:
Օրակարգի՝ 2-րդ հարցով ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքում առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի վերանորոգումը, ինչպես նաև սպորտ դպրոցի կիսակառույց շենքի վերանորոգման աշխատանքները:
Ռ. Խաչատրյանը ավելացրեց, որ իր ցանկությունն է լուծում տալ առաջնահերթ խնդիրներին, սակայն բյուջեն թույլ չի տալիս կատարել նման մեծածավալ աշխատանքներ:
Համայնքը ունի հիմնախնդիրներ՝
1.Փողոցների բարեկարգման աշխատանքներ
2.Փողոցների լուսավորության հին էլեկտրասյուները փոխելու
3.Մշակույթի տան շենքի վերանորոգման աշխատանքներ
4.Մսուր մանկապարտեզի շենքի վերանորոգում
5.Դպրոցի սպորտ դահլիճը ավարտուն տեսքի բերելու համար նախատեսվող շինարարություն
6.Երեխաների համար խաղահրապարակի կառուցում
7.Համայնքը չունի գյուղապետարանի շենք
Հարգելի ներկաներ՝ ես հնարավորության սահմաններում նշեցի համայնքում առկա հիմնախնդիրները և կատարված աշխատանքները:Դեռևս կան անելիքներ, որոնք ես նախատեսել եմ իմ քառամյա ծրագրում:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015թվական թիվ 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ՎԱԳՈՆ ՏՆԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարի 10 փետրվարի 2015թվականի թիվ 11.1/1000-15 հանձնարարականի, Արմավիրի մարզպետի 26 փետրվարի 2015թվականի թիվ 01/07.1/666-15 գրության և Մրգաստանի գյուղապետարանում տեղի ունեցած խորհրդակցության արդյունքները, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի բնակչուհի՝ Լուսինե Այդինյանին տրամադրել 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ, վագոն տնակ ձեռք բերելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5 կողմ Օղեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան ________
Հ. Հովհաննիսյան ________
Հ. Ասատրյան ________
Ա. Ասատրյան ________
Ա. Հովակիմյան ________

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվականի փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015թվականի թիվ 7-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԼՈՒՍԻՆԵ ԱՅԴԻՆՅԱՆԻՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 26 փետրվարի 2015թվականի թիվ 01/07.1/666-15 գրությունը և Մրգաստանի գյուղապետարանում տեղի ունեցած խորհրդակցության արդյունքները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի բնակչուհի՝ Լուսինե Այդինյանին անհատույց սեփականության իրավունքով հատկացնել ութ հարյուր /800/ քառակուսի մետր տնամերձ հողատարածք, համայնքի սեփականություն հանդիսացող տնամերձ հողերից:Նրանք բնակվում են «Մշակույթի տան» երրորդ հարկում, իսկ շենքը 3-րդ կարգի վթարային է:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5 կողմ 0դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվականի փետրվարի 25
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

# ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2015թվական թիվ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՈՒԹԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հատկացնել՝ 400 000 /չորս հարյուր հազար/ դրամ, մարտի ութի տոնին նվիրված միջոցառումներ կազմակերպելու համար:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 5 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

Մ. Հարությունյան
Հ. Հովհաննիսյան
Հ. Ասատրյան
Ա. Ասատրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թվականի փետրվարի 25
գ. Մրգաստան